| 2025թ.-ին ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գրավոր հարցումների ընդհանուր թիվը* | | | | | |
| | Ընդամենը** | Բավարարված | Մերժված*** | Մասնակի մերժված**** | Վերահասցեագրված |
| ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ | 32 | 32 | 0 | 0 | 1 |

| Մերժման հիմքը | Կիրառված հիմքի քանակը***** |
|---|---|
| պետական, ծառայողական գաղտնիք****** | |
| բանկային գաղտնիք | |
| առևտրային գաղտնիք | |
| անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիք | |
| հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ | |
| հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքների պաշտպանություն | |
| բժշկական գաղտնիք ******* | |
| նոտարական գաղտնիք | |
| փաստաբանական գաղտնիք | |

** **Գրավոր հարցումը** ներառում է թղթային, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ստացված հարցումները, այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստով և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով: Որպես գրավոր հարցում պետք է դիտարկվեն այն գրությունները, որոնցով դիմողը փնտրում կամ պահանջում է տեղեկություն տնօրինողից օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված կամ ձևավորված որևէ տվյալ: Այն, թե ինչպես է վերնագրված գրությունը (դիմում, հարցում) էական չէ, կարևոր է, որ գրությամբ տեղեկություն տնօրինողից ակնկալվի որևէ տեղեկության տրամադրում: Այլ պետական մարմիններից կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկություն տրամադրելու վերաբերյալ գրությունները ՏԱ մասին օրենքի իմաստով հարցումներ չեն:*

*** Այս սյունակում լրացվող թիվը պետք է համապատասխանի գրավոր հարցումների ընդհանուր թվին:*

**** **Մերժում** են համարվում այն պատասխանները, որով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել տեղեկությունը:*

***** **Մասնակի մերժման** դեպքում տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել ոչ թե պահանջվող ողջ տեղեկությունը, այլ դրա միայն մի մասը:*

****** Մերժման յուրաքանչյուր հիմքին համապատասխանող սյունակում նշվում է, թե քանի անգամ է կիրառվել տվյալ մերժման հիմքը. հաշվի առնելով, որ տեսականորեն մի հարցմամբ կարող է պահանջվել տարբեր հիքմերով մերժման ենթակա մի քանի տեղեկություն՝ այս թիվը կարող է հավասար կամ ավելին լինել, քան մերժումների (ներառյալ՝ մասնակի մերժումների) թիվն է, սակայն չի կարող մերժումների (ներառյալ՝մասնակի մերժումների) թվից պակաս լինել:*

******* Այս հիմքը ներառում է նաև տեղեկություն տնօրինողի գործունեությունը կարգավորող օրենքով գաղտնիք համարվող տեղեկության մերժումները (երբ տեղեկություն տնօրինողի համար օրենքով սահմանված է աշխատանքային կամ ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած կամ ձևավորած տվյալները գաղտնի պահելու պարտականություն):*

********** Օրենքներով կարող են սահմանված լինել*** *բժշկական, նոտարական կամ փաստաբանական գաղտնիքներից բացի* ***մասնագիտական գործունեությամբ*** *պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալների այլ դեպքեր: Օրենքներով նման այլ գաղտնիքի հիմքով տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում վիճակագրության վարման այս ձևանմուշում տեղեկություն տնօրինողը պետք է համապատասխան տող ավելացնի:*